ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՄՇԴ-63 -2024
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան «29» հունվար 2024 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ պետական մարմին), ի դեմս գլխավոր քարտուղար՝ Հասմիկ Հակոբյանի, որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Հայաստանի ազգային կինոկենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ կազմակերպություն), ի դեմս կազմակերպության տնօրենի պաշտոնակատար՝ Շուշանիկ Միրզախանյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2323-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում)՝ որոշման «1056. Կինոմատոգրաֆիայի ծրագրի» ծրագրի «11005. Կինոարվեստի հանրահռչակում» միջոցառման (այսուհետ՝ ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Սույն պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով կազմակերպությանը հատկացնել սույն պայմանագրով սահմանված վճարը, իսկ կազմակերպությունը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված վճարի դիմաց սույն պայմանագրով սահմանված կարգով ու ժամկետում իրականացնել Եվրոպական /Բեռլինյան/ կինոշուկային հայկական պատվիրակության մասնակցություն կազմակերպումը (այսուհետ՝ միջոցառումներ)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող՝

1.1.1. ծրագրի՝ Հավելված N 1,

1.1.2. նախահաշվի՝ Հավելված N 2:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ և ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ ՀՀ ֆինանսների նախարարության և պետական այլ մարմինների միջոցով) ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնել ներքին աուդիտ,

Սկանավորվել է CamScanner-ով

2.1.2. կազմակերպությունից պարբերաբար պահանջել ու ստանալ տեղեկատվություն սույն պայմանագրի կատարման ընթացքի մասին,

2.1.3. սույն պայմանագրով սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 6.2-րդ կետով նախատեսված տուգանքը, իսկ պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում՝ սույն պայմանագրի 6.3-րդ կետով նախատեսված տույժերը,

2.1.4. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. առանց հիմնավոր պատճառի կազմակերպությունը ժամանակին չի սկսում միջացառման իրականացումը, կամ միջոցառման իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (սույն պայմանագրով կամ կանոնադրությամբ միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5. կազմակերպության կողմից սույն պայմանագրի պահանջները չկատարելու դեպքում դադարեցնելու ֆինանսավորումը՝ մինչև թերությունների վերացումը,

2.1.6. կազմակերպության կողմից սույն պայմանագրով նախատեսված միջոցառումների ֆինանսական ծախսեր ենթադրող ոչ ֆինանսական ցուցանիշների թերակատարման դեպքում պահանջելու հետ վերադարձնել համապատասխան չափով հաշվարկած գումարը,

2.1.7. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. պետական մարմնից պահանջելու ընդունել սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված և կազմակերպության կողմից պատշաճ ձևով ու կարգով կատարված միջոցառումները,

2.2.2. պետական մարմնից պահանջելու վերացնել կազմակերպության գործողություններից (անգործությունից) անկախ՝ պետական մարմնի մեղքով սույն պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտները կամ վերանայել սույն պայմանագրի պայմանները,

2.2.3. իրականացված միջոցառումների արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու և պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

Սկանավորվել է CamScanner-ով

2.2.4. վաղաժամկետ լուծելու սույն պայմանագիրը՝ սույն պայմանագրով կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում,

2.2.5. անհրաժեշտության դեպքում սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող նախահաշվով նախատեսված ծախսային ուղղությունների միջև և ծախսային ուղղությունների տողերի միջև իրականացնել համապատասխանաբար յուրաքանչյուր ծախսային ուղղության և (կամ) ծախսային ուղղության տողերի գումարի 10 տոկոսի չափով շեղում՝ չխախտելով վճարումների համար սահմանված նորմերը:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և (կամ) ծրագրով նախատեսված դեպքերում իր և կազմակերպության կանոնադրություններով սահմանված իրավասությունների շրջանակներում աջակցել կազմակերպությանը, այդ թվում՝ կազմակերպությանը ցուցաբերել մեթոդական և կազմակերպական օգնություն,

2.3.2. ընդունել սույն պայմանագրի պահանջներին համապատասխան կազմակերպության կողմից պատշաճ ձևով ու կարգով կատարված միջոցառումները և հաշվետվությունները,

2.3.3. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ,

2.3.4. իրականացված միջոցառումների մասին ներկայացված ֆինանսական և բովանդակային հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում: Հաշվետվություններում թերություններ հայտնաբերվելու դեպքում դրանք վերադարձվում են լրամշակման կազմակերպությանը՝ լրամշակման համար սահմանելով խելամիտ ժամկետներ: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումները համապատասխանում են ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են,

2.3.5. իրականացնել սույն պայմանագրով նախատեսված այլ աշխատանքներ:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. սույն պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով՝ համաձայն սույն պայմանագրի 1.1-ին կետի,

2.4.2. ժամանակին, պատշաճ ձևով ու կարգով կատարել սույն պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված միջոցառումները,

2.4.3. պետական մարմնի պահանջով նրան հաղորդել տեղեկատվություն միջոցառումների կատարման ընթացքի մասին,

2.4.4. սույն պայմանագրով սահմանված պարտավորություններն իրականացնել պետական մարմնի կողմից հաստատված մեթոդական ցուցումների, հրահանգների և այլ իրավական ակտերի (փաստաթղթերի) պահանջներին համապատասխան,

2.4.5. պետական մարմնին անհապաղ հայտնել սույն պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտների մասին և միաժամանակ ձեռնարկել իր կողմից հնարավոր բոլոր միջոցները՝ դրանք վերացնելու համար,

Սկանավորվել է CamScanner-ով

2.4.6. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել միջոցառումների իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում,

2.4.7. կատարել պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.8. սույն պայմանագրի 4.1-ին կետով սահմանված ժամկետներում պետական մարմնին ներկայացնել հաշվետվություններ (ֆինանսական և բովանդակային) կատարված ծախսերի և իրականացված միջոցառումների մասին: Ֆինանսական հաշվետվությունը ներկայացվում է սույն պայմանագրի Հավելված N 3-ով սահմանված ձևանմուշով՝ նկատի ունենալով, որ փաստացի ծախսերը հիմնավորող հաշվապահական և այլ փաստաթղթերը գտնվում են կազմակերպության մոտ և վերջինս պատասխանատվություն է կրում ֆինանսական հաշվետվությամբ ներկայացված տվյալների իսկության համար: Բովանդակային հաշվետվությամբ ներկայացվում է ամբողջական տեղեկատվություն միջոցառումների իրականացման և ընթացքի մասին, այդ թվում արդյունքների գնահատումը, մասնակիցների քանակը, կցելով համապատասխան նյութեր (լուսանկարներ, ազդագրեր, հրավիրատոմսեր, մամուլի հրապարակումներ և այլն ներառյալ՝ իրազեկման բոլոր հարթակների տեսանելի վայրում պետական մարմնի (որպես ֆինանսավորող կողմ) վերաբերյալ այլ տեղեկատվական նյութեր)՝ էլեկտրոնային կրիչներով: Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում բովանդակային հաշվետվությամբ ներկայացված տվյալների իսկության համար,

2.4.9. պետական մարմնի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում անվճար՝ պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները,

2.4.10. միջոցառումների իրականացման մասին իրազեկման բոլոր հարթակների տեսանելի վայրում (ներառյալ ազդագրերը, հրավիրատոմսերը, մամուլի հրապարակումները և այլն), ինչպես նաև միջոցառումների իրականացման մասին իրազեկմանն ուղղված ցանկացած գրավոր և/կամ բանավոր խոսքում հրապարակել պետական մարմնի անունը (որպես ֆինանսավորող կողմ), իսկ համաֆինանսավորման դեպքում՝ պետական մարմնին տրամադրել ամբողջական տեղեկատվություն՝ ծրագրին աջակցող կազմակերպության(ների), ֆինանսավորման չափի և վերջինիս(ներիս) հետ ձեռք բերված այլ պայմանավորվածությունների մասին,

2.4.11. սույն պայմանագրից բխող միջոցառումները չկատարելու դեպքում վերադարձնել պետական մարմնի կողմից տրամադրված գումարը և վճարել տուգանք սույն պայմանագրի 3.1-ին կետում նախատեսված գումարի 5.0 (հինգ) տոկոսի չափով,

2.4.12. իրականացնել միջոցառումների շրջանակներում պետական մարմնի կողմից տրամադրված գումարների հաշվապահական հաշվառման վարում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով,

Սկանավորվել է CamScanner-ով

2.4.13. միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել **Աշխատանքային օրենսգրքով, ինչպես նաև «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով** սահմանված կարգով,

2.4.14. սույն պայմանագրով սահմանված միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումների, ինչպես նաև չհիմնավորված ծախսերի գումարները վերադարձնել ՀՀ պետական բյուջե՝ ոչ ուշ քան մինչև 2024 թվականի դեկտեմբերի 20-ը:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԸ

3.1. Սույն պայմանագրի 1.1 կետում նշված միջոցառումների իրականացման համար պետական մարմինը կազմակերպությանն է հատկացնում է **4885,0 հազար** (չորս միլիոն ութ հարյուր ութսունհինգ հազար) դրամ՝ (ներառյալ հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները)՝ համաձայն Հավելված N 1-ի:

3.2. Սույն պայմանագրի 3.1-ին կետում սահմանված գումարի 80 %-ը կազմակերպությանը հատկացվում է սույն պայմանագրի կնքումից հետո, իսկ 20 %-ը՝ սույն պայմանագրի 5.1-ին կետով նախատեսված հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելուց հետո՝ կազմակերպության հաշվեհամարին փոխանցելու միջոցով:

3.3. Համաձայն «ՀՀ 2024 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 23-րդ մասի՝ հաշվարկված ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները չեն կարող ուղղվել այլ նպատակների և չօգտագործված գումարները 2024 թվականի ընթացքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ

4.1. Սույն պայմանագրով նախատեսված միջոցառումների կատարման ժամկետը մինչև 2024 թ. փետրվարի 23-ն է, իսկ հաշվետվությունների ներկայացման ժամկետը՝ մինչև սույն պայմանագրով նախատեսված միջոցառումների կատարման ավարտին հաջորդող 30-րդ օրացուցային օրը:

4.2. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

5. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1. Սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված և ամբողջությամբ կատարված միջոցառումները կազմակերպության կողմից ներկայացվում են պետական մարմնի ընդունմանը ոչ ուշ, քան սույն պայմանագրով սահմանված ժամկետում: Պետական մարմնի կողմից դրանց ընդունման դեպքում այդ մասին կազմվում է հանձնման-ընդունման արձանագրություն (Հավելված N 4):

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Սկանավորվել է CamScanner-ով

6.1. Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

6.2. . Սույն պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված պարտավորությունների ոչ պատշաճ կատարման դեպքում, ինչպես նաև սահմանված ժամկետները կազմակերպության կողմից չպահպանելու դեպքում վերջինս պետական մարմնին վճարում է տուգանք՝ ոչ պատշաճ կատարված պարտավորության համար նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով, իսկ սահմանված ժամկետները խախտելու դեպքում ժամկետների խախտմամբ իրականացված պարտավորության համար նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար:

6.3. Սույն պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում կազմակերպությունը պետական մարմնին վճարում է տույժ՝ պայմանագրի գնի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար: Ընդ որում, սույն կետով սահմանված տույժերը վերաբերում են պետական մարմնին ներկայացվող ինչպես ֆինանսական, այնպես էլ՝ բովանդակային հաշվետվություններից յուրաքանչյուրին:

6.4. Սույն պայմանագրի 6.2-րդ և 6.3-րդ կետերով նախատեսված տուգանքը և տույժը կարող է հաշվարկվել և հաշվանցվել միջոցառումների իրականացման արդյունքում կազմակերպությանը վճարման ենթակա գումարների հետ:

6.5. Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.6. Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6.7. Սույն պայմանագրով կազմակերպության կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով սույն պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը պետական մարմինը հրապարակում է իր պաշտոնական կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կազմակերպությունը համարվում է սույն պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Սույն պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը կայքում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև կազմակերպության էլեկտրոնային փոստին:

6.8. Սույն պայմանագրի կնքումից հետո 3-օրյա ժամկետում կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, կազմակերպության կողմից դրամաշնորհ ստանալու համար ներկայացված ծրագիրը հրապարակվում են պետական մարմնի պաշտոնական ինտերնետային կայքէջում:

6.9. Կազմակերպությունը սույն պայմանագրով նախատեսված ժամկետներում պետական մարմնին ներկայացնում է միջոցառումների կատարման վերաբերյալ հաշվետվություն, որը պետական մարմնի կողմից ընդունվելուց հետո 3-օրյա ժամկետում հրապարակվում է պետական մարմնի պաշտոնական ինտերնետային կայքէջում՝ բացառությամբ անձի եկամուտներին վերաբերող դրամաշնորհային պայմանագրերի:

Սկանավորվել է CamScanner-ով

7. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ

7.1. Պետական մարմինը միջոցառումների իրականացման արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

7.2. Մոնիթորինգն իրականացվում է պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

7.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

7.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է միջոցառումների շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով միջոցառումներին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

7.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

9.1. Սույն պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

9.2. Սույն պայմանագիրը կնքվում է պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9.3. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՈՒ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սկանավորվել է CamScanner-ով

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ք.Երևան,Կառավարական 2 շենք
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011033348
ՀՎՀՀ 02698732

Գլխավոր քարտուղար՝

Կ.Տ. _____ Հ. Հակոբյան
/ստորագրություն/

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի ազգայինկինոկենտրոն» ՊՈԱԿ
ք.Երևան, Տերյան 3ա
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900018001744
ՀՎՀՀ 01203271

Տնօրենի պաշտոնակատար՝

Կ.Տ. _____ Հ. Միրզախանյան
/ստորագրություն/

Սկանավորվել է CamScanner-ով

Հավելված N 1
«29» «01» 2024 թ.
N ՄՇԴ-63-2024 պայմանագրի

ԾՐԱԳԻՐ

Եվրոպական /Բեռլինյան/ կինոշուկային հայկական պատվիրակության մասնակցության

1	Կազմակերպության անվանում	Հայաստանի ազգային կինոկենտրոն
2	Կազմակերպության գտնվելու վայր	Հայաստան, Երևան, Տերյան 3Ա
3	Ծրագրի անվանում	Եվրոպական /Բեռլինյան/ կինոշուկային հայկական պատվիրակության մասնակցություն
3.1	Բովանդակություն	2024թ. Հայաստանի ազգային կինոկենտրոնը նախատեսում է մասնակցել Եվրոպական կինոշուկային (փետրվարի 15-21-ը)՝ իրականացնելով ստույգ ռազմավարական նպատակներ. 2024թ. Սերգեյ Փարաջանովի 100-այա հոբելյանի շրջանակում նախատեսվում է Եվրոպական կինոշուկայում բանակցել տարբեր համաշխարհային կինոհարթակների ներկայացուցիչների հետ՝ վարպետի ֆիլմերի ցուցադրությունների և «Կինոյի տաճար» ինստալիացիայի իրականացման համար գործընկերներ ձեռք բերելու և արդեն առկա պայմանավորվածությունների մանրամասները քննարկելու համար: Հայկական պատվիրակության գործունեությունը ապահովելու համար նախատեսվում է Եվրոպական կինոշուկայում կազմակերպել Հայկական տաղավար՝ /11քմ/ պահպանելով պատշաճ մասնակցության բոլոր չափանիշները՝ - տաղավարը կհագեցվի համապատասխան տեխնիկական սարքավորումներով և անհրաժեշտ կահույքով - կտպագրվի 2023-2024 թթ. հայկական կինոինդուստրիան նկարագրող կատալոգը, որը նաև հասանելի կլինի օնլայն՝ QR կոդը ներբեռնելով: -միջազգային ասպարեզում Ս. Փարաջանովի 100-ամյակի մասին իրազեկվածությունը խթանելու նպատակով կպատրաստվեն փարաջանովյան մոտիվներով պայուսակներ, շապիկներ: Կպատրաստվեն նաև հուշանվեր անձրևանոցներ՝ գործընկեր կազմակերպությունների ղեկավարներին:

Սկանավորվել է CamScanner-ով

		- Կիրականացվի տաղավարի ձևավորման համար անհրաժեշտ նյութերի տպագրություն Բեռլինում: - Կպատրաստվի հայկական ժամանակակից ֆիլմերը ներկայացնող պրոմո հոլովակ, ինչպես նաև Սերգեյ Փարաջանովի 100-ամյակին նվիրված հոլովակ՝ կինոշուկայի հայկական տաղավարում պարբերաբար ցուցադրելու համար: Ավանդույթի համաձայն նախատեսվում է կազմակերպել Happy Hour՝ հյուրասիրություն, որին կհրավիրվեն տարբեր երկրների կինոկենտրոնների տնօրեններ, կինոֆոնդերի ներկայացուցիչներ, պրոդյուսերներ և այլոք, հյուրերին կներկայացվի հոբելյանական տարվա շրջանակներում իրականացվող ծրագրերն ու միջոցառումները: Եվրոպական կինոշուկայում հայկական պատվիրակության աշխատանքները կղեկավարի *Հայաստանի ազգային կինոկենտրոնի տնօրենը:* Պատվիրակության կազմում կաշխատեն՝ *Կինոկենտրոնի միջազգային կապերի բաժնի ղեկավարը, Եվրիմաժի հայաստանյան ներկայացուցիչը, տաղավարի պատասխանատուն և տաղավարի աշխատանքների և հանդիպումների տեսալուսանկարիչը:* Նախատեսվում են հանդիպումներ հետևյալ կազմակերպությունների ներկայացուցիչների հետ՝ **Ֆիլմ Բազաար** Հանդիպում Հնդկաստանի «Ֆիլմ Բազաար» կինոշուկայի տնօրեն Լինա Խոբրագադեի հետ: Հանդիպման ընթացքում նախատեսվում է քննարկել Հնդկաստանում Ս. Փարաջանովի 100-ամյակին նվիրված ֆիլմերի ցուցադրություններ կազմակերպելու հնարավորությունները, ինչպես նաև Հայաստանի մասնակցության հեռանկարները 2024թ.ին կայանալիք հնդկական «Ֆիլմ Բազաար» կինոշուկային, որը համարվում է հարավասիական տարածաշրջանի ամենամեծ շուկաներից մեկը: **Բեռլին Կլասիկս** Նախատեսվում են բանակցություններ Berlin Classics-ի ընտրական կոմիտեի և ռետրոսպեկտիվ ցուցադրությունների համակարգող Անիկա Հաուփտսի հետ՝ 2025թ.-ի Berlin Classics ծրագրում հայկական վավերագրական կամ անիմացիոն ֆիլմ/ֆիլմեր ներառելու նպատակով:

Սկանավորվել է CamScanner-ով

		Մարտին Սկորսեզեի «Համաշխարային Ֆոնդի» (Film Foundation) ներկայացուցիչ Սեսիլիա Սենսիարելիի հետ՝ քննարկել -Ս. Փարաջանովի «Նռան Գույնը» ֆիլմի վերականգնման պայմանագրի մեջ փոփոխությունների հնարավորությունը, -2024թ. Բոլոնիա քաղաքում կայանալիք II Cinema Ritrovato արխիվային ֆիլմերի կինոփառատոնին Ս. Փարաջանովի կամ իր մասին վավերագրական ֆիլմերի ցուցադրության և «Կինոյի տաճար» ինստալիացիայի կազմակերպման հնարավորությունը: **«Կինոկլասիկա» բրիտանական ֆոնդի տնօրեն Ժուստին Վադելի հետ (Kino Klassika Foundation)՝** - Սերգեյ Փարաջանովի 100-ամյակի շրջանակներում քննարկել «Կլասիկի» սթրիմինգային հարթակում, ինչպես նաև կազմակերպության հետ համագործակցող Լոնդոնի Leeds Cinema Hall և the Lumiere Cinema Hall կինոթատրոններում Ս. Փարաջանովի մասին վավերագրական ֆիլմերի ցուցադրության հնարավորությունը: **-Էստոնիայի, Լատվիայի, Լիտվայի և Մոնտենեգրոյի Կինոկենտրոնների տնօրենների հետ՝** քննարկել համագործակցության հնարավորությունները: Էստոնիայի Կինոկենտրոնի տնօրեն Եդիթ Սեփի հետ քննարկել Տալլինի «Սև գիշերներ» միջազգային կինոփառատոնի շրջանակներում Ս. Փարաջանովի կամ նրա մասին վավերագրական ֆիլմերի ցուցադրության հնարավորությունը: **-FIAF – միջազգային կինոարխիվների ֆեդերացիայի ներկայացուցչի հետ՝** քննարկել համագործակցության ծրագրերը, հաշվի առնելով, որ Կինոկենտրոնը 2022թ. ապրիլից անդամակցում է կազմակերպությանը: **-WCF – համաշխարային կինոֆոնդի հետ՝** քննարկել համագործակցության հնարավորությունները: **Ֆրանսիայի Կինոկենտրոնի (CNC) հետ՝** Ստորագրել «CNC»-ի, և Հայաստանի ազգային կինոկենտրոնի միջև 11 կետից բաղկացած կինոյի և շարժվող պատկերի ոլորտում իրականացվող Ֆրանսիա-Հայաստան գործողությունների ծրագիր: Քննարկել համագործակցությունը կրթական ծրագրերի ասպարեզում 2024 թ. համար: **Եվրիմաժի հետ՝**

Սկանավորվել է CamScanner-ով

		Եվրիմաժ մշակութային հիմնադրամի նախագահ Ք. Թրոթմանի և հիմնադրամի գործադիր տնօրեն՝ Սյուզան Նյումանի հետ հանդիպում, որի ընթացքում նախատեսվում է քննարկել 2024թ.ին Կինոկենտրոնի և Եվրիմաժի համագործակցությամբ համատեղ **դասընթաց** իրականացնելու հնարավորությունը: **Վենետիկի կինոփառատոն** Վենետիկի միջազգային կինոփառատոնի Venice Classics բաժնի պատասխանատու Ֆեդերիկո Ջիրոնիի հետ քննարկել «Մեր մանկության տանգոն» ֆիլմը 2024թ. Վենետիկի միջազգային կինոփառատոնի «Կլասսիկս» բաժնում ներկայացնելու հնարավորությունը: Ս. Փարաջանովի 100-ամյակի առիթով վարպետի ֆիլմերի հետահայաց ցուցադրության և «Կինոյի տաճար» ինստալացիայի կազմակերպման հնարավորությունները: **Միդփոյնթ ինստիտուտ** (MIDPOINT Institute) Պրահայի Միդփոյնթ ինստիտուտի ներկայացուցիչների հետ քննարկել Հայաստանում սցենարի և նախագծերի զարգացման դասընթացներ կազմակերպելու Միդփոյնթի առաջարկի մանրամասները: **Կարլովի Վարի կինոփառատոնի տնօրեն Կարել Օխի հետ** քննարկել Ս. Փարաջանովի 100-ամյակի առիթով փառատոնի շրջանակներում Փարաջանովի ֆիլմերի հետահայաց ցուցադրության և «Կինոյի տաճար» ինստալացիայի կազմակերպման հնարավորությունները: **Թբիլիսիի կինոփառատոնի տնօրեն՝ Գագա Չխեիդզեի հետ** քննարկել 2024թ. դեկտեմբերին Թբիլիսիի կինոփառատոնի շրջանակնեևում Ս. Փարաջանովի հոբելյանին նվիրված իրականացվելիք միջոցառումների ՝ «Կինոյի տաճար» ինստալիացիայի և Ս. Փարաջանովի ֆիլմերի ցուցադրության մանրամասները: **Ուկրաինայի կինոինստիտուտի ներկայացուցչի հետ՝** քննարկել 2024թ. ընթացքում Ս. Փարաջանովի հոբելյանին նվիրված իրականացվելիք միջոցառումներին համատեղ մասնակցության հնարավորությունները:
3.2	Նպատակ	Միջազգային գործընկերների հետ համագործակցության ընդլայնում և նոր կապերի հաստատում, Սերգեյ Փարաջանովի 100-ամյա հոբելյանական միջոցառումների շրջանակում ծրագրերի քննարկում, հայկական ժամանակակից կինոարտադրնքի և կինոժառանգության հանրահռչակում և միջազգային դիրքավորում:

Սկանավորվել է CamScanner-ով

3.3	Անցկացման ժամկետ	2024թ.փետրվարի 14-22
3.4	Անցկացման վայր	Բեռլին,Գերմանիա
3.5	Ակնկալվող արդյունքներ	Եվրոպական կինոշուկայում Հայաստանի ներկայացվածությունը կնպաստի հայկական կինոարվեստի միջազգային դիրքավորմանը, հայ-եվրոպական և այլ երկրների կինոարտադրողների միջև կապերի ստեղծմանը և ամրապնդմանը՝ խթանելով ոլորտի զարգացումը և հայ կինոյի միջազգային ճանաչելիությունը:
3.6	Ոչ ֆինանսական ցուցանիշներ	Եվրոպական կինոշուկայում Հայաստանի ներկայացվածությամբ ակնկալվում է՝ մասնակից՝ 5 հանդիպումներ՝ 9-11 պրոմո հոլովակ՝ 1 հոբելյանական հոլովակ՝ 1

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ք.Երևան,Կառավարական 2 շենք
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011033348
ՀՎՀՀ 02698732

Գլխավոր քարտուղար՝

Հ. Հակոբյան

Կ.Տ. /ստորագրություն/

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
«Հայաստանի ազգայինկինոկենտրոն» ՊՈԱԿ
ք.Երևան, Տերյան 3ա
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900018001744
ՀՎՀՀ 01203271

Տնօրենի պաշտոնակատար՝

Շ. Միրզախանյան

Կ.Տ. /ստորագրություն/

Սկանավորվել է CamScanner-ով

Հավելված N 2
«23» 01 » 2024 թ.
N ՄՇԴ-63-2024 պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇԻՎ
Եվրոպական /Բեռլինյան/ կինոշուկային հայկական պատվիրակության մասնակցության

Հ/Հ	Ծախսատեսակի անվանումը	Չ/Մ	Քանակ	Մեկ միավորի արժեքը (հազար դրամ)	Գումարը (հազար դրամ)
1	**Վարձատրության ծախս*, ներառյալ հարկերը, այդ թվում՝**				**250,0**
1.1	կատալոգի խմբագիր՝ թարգմանիչ անգլերեն լեզվով (37 էջ)		1	205,0	250,0
2	**Վարձակալության ծախսեր, այդ թվում՝**				**1467,5**
2.1	տաղավարի վարձակալություն՝ 11 քառ.մետր 5225 եվրո x 441դ. = 2304,2 հ.դ., որից պետական ֆինանսավորումը՝ 1130,0 հ.դ.	հատ	1	1130,0	1130.0
2.2	մոնիտոր LCD՝ 480,0 եվրո x 441 դ. = 211,7 հ. դ.	հատ	1	211,7	211,7
2.3	բազկաթոռ՝ 75 եվրո x 441 դ. = 33,1 հ. դ.	հատ	2	33,1	66,2
2.4	փոքր սեղան (38 x 50 x 50)՝40 եվրո x 441 դ. = 17,6 հ. դ.	հատ	1	17,6	17,6
2.5	Ստենդ բուկլետների համար՝ 95 եվրո x 441 դ. = 42,0 հ. դ.	հատ	1	42,0	42,0
3	**Տպագրական ծառայություններ, այդ թվում՝**				**1 860,4**
3.1	տաղավարի ձևավորում, դիզայնի տպագրություն, տպագրված նյութերի տեղադրում, մոնտաժ և ապամոնտաժ՝ 3334,2 եվրո x 441դ. = 1470,4 հ. դ.	հատ	1	1470,4	1 470,4
3.2	կատալոգի տպագրություն՝ 50 հատ x 4,4 հ.դ.= 220,0 հ.դ	հատ	1	220,0	220,0
3.3	պայուսակ լոգոյով՝ 50 հատ x 3,4 հ. դ.= 170,0 հ.դ.	հատ	1	170,0	170,0
4	**Կազմակերպչական ծառայություններ,այդ թվում՝**				**492,9**
4.1	տաղավարի դիզայն Երևանում	հատ	1	100,0	100,0
4.2	Այցեքարտ՝ 3 հատ x 450 եվրո. x 441դ = 595,4 հ.դ. որից պետական ֆինանսավորումը՝ 392,9 հ.դ.	**հատ**	1	392,9	392,9

Սկանավորվել է CamScanner-ով

	ԸՆԴԱՄԵՆԸ				4070,8
	ԱԱՀ**				814,2
	ԸՆԴԱՄԵՆԸ, ներառյալ ԱԱՀ				4885,0

*Ծախսերը պետք է իրականացվեն բացառապես ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված կարգով
** ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները որպես հարկային պարտավորություն ենթակա են վճարման Կատարողի կողմից որպես ԱԱՀ, հակառակ դեպքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ք.Երևան,Կառավարական 2 շենք
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011033348
ՀՎՀՀ 02698732

Գլխավոր քարտուղար

Հ. Հակոբյան

Կ.Տ. /ստորագրություն/

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
«Հայաստանի ազգայինկինոկենտրոն» ՊՈԱԿ
ք.Երևան, Տերյան 3ա
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900018001744
ՀՎՀՀ 01203271

Տնօրենի պաշտոնակատար՝

Շ. Միրզախանյան

Կ.Տ. /ստորագրություն/

Սկանավորվել է CamScanner-ով

Հավելված N 3
«29» «04» 2024 թ.
N ՄՇԴ-63-2024 պայմանագրի

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Կատարող կազմակերպությունը _____
Ծրագրի անվանումը _____

NN	Նախահաշվի հոդվածը	Գումարը՝ համաձայն նախահաշվի (դրամով)	Փաստացի գումարը (դրամով)	Շեղումը նախահաշվի համեմատ (+- դրամով)	Հոդվածի ծախսը հավաստող փաստաթղթի անվանումը, համարը և ամսաթիվը
1					
2					
3					
	Ընդամենը				

«____» _____ 2024 թ.

Կատարող կազմակերպության ղեկավարը
ԸՆԴՈՒՆԵՑ՝

_____ /_____/
(անուն-ազգանուն) (ստորագրություն)

պատասխանատու՝

Կատարող կազմակերպության
գլխավոր հաշվապահ
(անուն-ազգանուն) (ստորագրություն)

ՓԱՍՏԱԹՂԹԵՐՆ

ՀՀ ԿԳՄՍ նախարարության

_____ /_____/
(անուն-ազգանուն) (ստորագրություն)

Սկանավորվել է CamScanner-ով

Հավելված N 4
«29» «01» 2024 թ.
N ՄՇԴ-63-2024 պայմանագրի

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

Երևան,Կառավարական տուն 2

ՀՎՀՀ՝ 02698732

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝

«Հայաստանի ազգայինկինոկենտրոն» ՊՈԱԿ

Հասցե՝ ք.Երևան, Տերյան 3ա

ՀՎՀՀ՝ 01203271

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀԱՆՁՄԱՆ – ԸՆԴՈՒՆՄԱՆ

ք. Երևան

Պայմանագրի համարն ու կնքման ամսաթիվը N « » « » 2024 թ.

Պետական մարմին՝ ի դեմս ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գլխավոր քարտուղար _____,
(անուն ազգանուն)

և Կազմակերպությունը, ի դեմս _____ -ի տնօրեն՝ _____
կազմակերպության անվանում

_____ի, հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ
(անուն ազգանուն)

բովանդակային վարչության « » « » 2024 թ.-ի եզրակացությունը, ինչպես նաև նախարարության հաշվապահական հաշվառման վարչության « » « » 2024 թ.-ի թիվ ե - ՄՇԴ- եզրակացությունը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Կազմակերպությունը պայմանագրի շրջանակներում իրականացրել է _____ միջոցառումը, իսկ Պետական մարմինն վճարել է դրա դիմաց՝ պայամանագրով սահմանված կարգով և չափով:

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ք.Երևան,Կառավարական 2 շենք
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011033348
ՀՎՀՀ 02698732

Գլխավոր քարտուղար՝

_____Հ. Հակոբյան

Կ.Տ. /ստորագրություն/

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
«Հայաստանի ազգայինկինոկենտրոն» ՊՈԱԿ
ք.Երևան, Տերյան 3ա
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900018001744
ՀՎՀՀ 01203271

Տնօրենի պաշտոնակատար՝

_____ Շ. Միրզախանյան

Կ.Տ. /ստորագրություն/

Սկանավորվել է CamScanner-ով